

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 37/4**

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20.04.2018թ. N1502640 վարչական ակտի դեմ Ռոմեն Ահարոնյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

Ռոմեն Ահարոնյանի կողմից դիմում-բողոք է բերվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20.04.2018թ. N1502640 վարչական ակտի դեմ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը բերել է դիմում-բողոք բերելու իրավասություն չունեցող անձը:

Քննարկվող դեպքում դիմում-բողոքը վերաբերվում է «Մեքսիկո» ՍՊԸ-ի նկատմամբ կազմված ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 20.04.2018թ. N1502640 վարչական ակտին, սակայն դիմում-բողոքը բերվել է վերջինս ներկայացնելու իրավասություն չունեցող անձի՝ Ռոմեն Ահարոնյանի կողմից: Մասնավորապես, դիմում-բողոքին կից ներկայացված չէ Ռոմեն Ահարոնյանի՝ «Մեքսիկո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հանդիսանալու մասին ապացույց (լիազորագիր):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Ռոմեն Ահարոնյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ**